Արձանագրություն N 3
« ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Անի համայնք

11 հուլիսի 2018թ. ժամը 15:00,
ք. Մարալիկ, Մադաթյան 1
Անի համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Պետրոսյան(ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան (ԳՊ/ԳԱ), Ա. Մարտիրոսյան (ԳՊ/ԳԱ)

Լ. Վարժապետյան (ԳՊ/ԲԱ), Մ. Մարտիրոսյան (ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Նիկոլյան (ԳՊ/ՄՀմ)

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ի. Պետրոսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ի. Պետրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ –ն սահմանված ժամկետում ներկայացրել է որկավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:
2. Ընդունել ի գիտություն, որ վերը նշված փաստաթղթերի պատճենները տրամադրվել են հանձնաժողովի նախագահին և անդամներին:
3. <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ –ն որկավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:
4. Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ –ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/ , ներկայացրեց իր կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց.

ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ –ն –ին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ – 3 , դեմ – 0

4. Հաստատել հայտարարության տեքստը /կցվում է/ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ պայմանագիր կնքելու որոշման և մասնակցի իրական շահառուների մասին հայտարարությունները հրապարակել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ – 3 , դեմ – 0

5. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ – 3 , դեմ – 0

3. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ի. Պետրոսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.
Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, Անի համայնքապետարան ք. Մարալիկ, Մադաթյան 1 հասցեում:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ – 5 , դեմ – 0

Հանձնաժողովի
նախագահ՝ ---------- Ի. Պետրոսյան

Քարտուղար ---------- Լ. Նիկոլյան

Անդամներ՝ ---------- Լ. Վարժապետյան

---------- Մ. Մարտիրոսյան

---------- Ա. Գասպարյան

---------- Ա. Մարտիրոսյան